



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

23.02.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԱՑ-ԱՄ-2017/95**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2017թ. թիվ 03/26-3/24236-17 գրությամբ «Արարատշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) 20.12.2017թ. թիվ 1031 և 21.12.2017թ. թիվ 1039 գրությունների հիման վրա, 25.12.2017թ. թիվ 03/26-3/24236-17 գրությամբ խորհրդում նախաձեռնել է «Արարատշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Արարատշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«Վ գնումների բողոքարկման խորհուրդը 25.12.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/24313-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Արարատշին» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 26.01.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«12.09.2017 թվականին Հայաստանի Տարածքային Ջարգացման Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և Արարատշին ՍՊ Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքվել է թիվ «ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է կատարել N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք):

11.09.2017 թվականին Ընկերության և «Հայքիզնեսքանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) միջև կնքվել է թիվ E17-000190 կատարման բանկային երաշխիքի համաձայնագիր:

11.09.2017 թվականին Ընկերության և Բանկի միջև կնքվել է թիվ E17-000191 կանխավճարի բանկային երաշխիքի համաձայնագիր, որոնց համար կատարվել են համապատասխան բանկային վճարումներ, մասնավորապես՝

ա) 14.08.2017 թվականին որպես կոմիսիոն վճար վճարվել է՝ 150.000 ՀՀ դրամ (ելքի օրդեր N 000041),

բ) 14.08.2017 թվականին որպես երաշխիք նամակի սպասարկում վճարվել է՝ 5.000 ՀՀ դրամ (ելքի օրդեր N 000042),

գ) 14.09.2017 թվականին որպես E17-000191 բանկային երաշխիքի կոմիսիոն վճար վճարվել է՝ 783.900 ՀՀ դրամ (ելքի օրդեր N 004510),

դ) 14.09.2017 թվականին որպես E17-000191 բանկային երաշխիք նամակի սպասարկման համար վճարվել է՝ 5.000 ՀՀ դրամ (ելքի օրդեր N 004509),

ե) 14.09.2017 թվականին որպես բանկային երաշխիքի կոմիսիոն վճար վճարվել է՝ 252.053 ՀՀ դրամ (ելքի օրդեր N 004511),

զ) 14.09.2017 թվականին որպես E17-000190 բանկային երաշխիք նամակի սպասարկում վճարվել է՝ 5.000 ՀՀ դրամ (Ելքի օրդեր N 004512), այսուհետ՝ Ելքի օրդերներ:

27.11.2017 թվականին Հիմնադրամի կողմից ներկայացվել է լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվ, ինչն ընդանրապես չի համապատասխանել Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվին:

04.12.2017 թվականին Ընկերության կողմից առարկություն է ներկայացվել այն հանգամանքի վերաբերյալ, որ Հիմնադրամի կողմից 27.11.2017 թվականին ներկայացված լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվը չի համապատասխանում Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվին:

06.12.2017 թվականին Հիմնադրամի ծրագրերի իրականացման բաժնի պետի կողմից ներկայացվել է պատճառաբանություն այն մասին, որ «առաջարկվող փոփոխությունները ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3 պետական գնման պայմանագրով սահմանված պայմանագրային գնի փոփոխություն չեն նախատեսում», և վկայակոչվել է ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 56 կետի 3-րդ ենթակետով նախատեսված եզրույթը:

15.12.2017 թվականին Ընկերության կողմից Հիմնադրամին ներկայացվել է դիրքորոշում այն մասին, որ Հիմնադրամի Պատասխանը չի բխում գործող իրավակարգավորումից, և տվյալ դեպքում կիրառելի է ոչ թե ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 56 կետի 3-րդ ենթակետը, այլ՝ նույն որոշման 56 կետի 1-ին ենթակետի պահանջը:

Պայմանագրի 3.2.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր էր Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք, ինչը չի կատարել, որպիսի հանգամանքը հանդիսանում է Պայմանագրի էական պայմանի խախտում:

15.12.2017 թվականին Ընկերության կողմից Հիմնադրամին ներկայացված դիրքորոշմամբ պատճառաբանվել է նաև, որ Հիմնադրամը խախտել է Պայմանագրի 3.2.3 կետը, որի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր էր Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք, ինչը չի կատարել, իսկ նախագիծը

տրամադրել է միայն 27.11.2017 թվականին, որպիսի հանգամանքները հանդիսանում են Պայմանագրի էական պայմանների խախտումներ:

Վերը նշված փաստերի համադրության ուժով, որպես հիմնավորումներ, Ընկերության կողմից առարկայացվում են ներքոգրյալ իրավափաստական հանգամանքները.

Որպես առաջին հանգամանք անհրաժեշտ է արձանագրել, որ Պայմանագրի 3.2.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր էր Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտել Կողմերի ստորագրման պահից և գործել է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Տվյալ դեպքում Հիմնադրամի կողմից մինչ օրս պատշաճ չեն կատարվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին չի տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք, ինչի հետևանքով Ընկերությանը զրկել է Պայմանագրով ստանձնած աշխատանքներն իրականացնելու փաստացի հնարավորությունից:

Ստեղծված պայմաններում առնվազն անհասկանալի և անհրճոյունելի է Հիմնադրամի կողմից Պայմանագիրը լուծելու վերաբերյալ միակողմանի գործողությունը:

Տվյալ դեպքում Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման» աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Ինչը մինչ այսօր պատրաստ է կատարարել, առկա խոչնդոտները Հիմնադրամի կողմից վերացնելուց հետո: Այլ կերպ ասած Կապալառուի կողմից ստանձնած Պայմանագրով սահմանված պարտավորության կատարման միակ պատճառը սահմանափակվում է Պատվիրատու կողմից ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարմամբ, մասնավորապես՝

Կապալառուին մինչ օրս աշխատանքների իրականացման համար համապատասխան տարածք չտրամադրելը:

«Քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Նույն օրենսգրքի 346-րդ հոդվածի, 2-րդ կետի համաձայն՝ եթե կողմերից յուրաքանչյուրը պայմանագրով պարտականություն է կրում հոգուտ մյուս կողմի, ապա նա մյուս կողմի պարտապանն է այն բանում, ինչը պարտավոր է անել հոգուտ նրա և միաժամանակ նրա պարտատերն է այն բանով, ինչն իրավունք ունի նրանից պահանջել:

Նույն օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Տվյալ դեպքում Հիմնադրամի բոլոր գործողություններն ուղված են եղել ոչ թե Պայմանագրի կատարմանը այլ արհեստականորեն դրա լուծմանը:

Որպես երկրորդ հանգամանք անհրաժեշտ է արձանագրել, որ Հիմնադրամի կողմից միակողմանի առանց համապատասխան իրավակարգավորման, Պայմանագիրը կնքելուց հետո, փոփոխվել է Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 սկզբնական հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշիվը, և միայն երկու ամիս անց՝ 27.11.2017 թվականին ներկայացվել է Ընկերությանը որպես նոր նախագիծ, որպիսի հանգամանքն Ընկերության կողմից գնահատվում է ոչ իրավաչափ մոտեցում՝ կողմերի միջև առկա պայմանագրաիրավական հարաբերությունների իրավունքների և պարտականությունների իրացման ծավալի նկատմամբ: Վերը նշված մոտեցումը սույն գործով Պատասխանողի կողմից ներկայացվել է որպես «Կառավարության 04.05.2017

թվականի թիվ 526 որոշման 56 կետի 3-րդ ենթակետով իրավակարգավորում, և պատճառաբանվել է, որ «առաջարկվող փոփոխությունները ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3 պետական գնման պայմանագրով սահմանված պայմանագրային գնի փոփոխություն չեն նախատեսում», մինչդեռ դա իրավական առումով մոլորություն է իրավահարաբերության մասնակիցների համար, և չի կարող ընդունելի լինել, հետևյալ պատճառաբանությամբ.

Հիմնադրամի ներկայացված դիրքորոշումն այն մասին, որ իրենց կողմից ներկայացված նոր նախագծով Պայմանագրի գնի փոփոխություն նախատեսված չէ, կարգավորվում է ոչ թե ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 56 կետի 3-րդ ենթակետով, այլ նույն Որոշման 56 կետի 1-ին ենթակետով, որի համաձայն՝ Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝ պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցումը կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը:

Տվյալ դեպքում Հիմնադրամն իր գործողությունները պետք է համապատասխանեցնեն առկա այն փաստական ծավալին, որոնք համահունչ են միայն ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 56 կետի 1-ին ենթակետի պահանջի հետ, ինչն ուղղակիորեն արգելում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք «հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխմանը»:

Ստեղծված պայմաններում Հիմնադրամի կողմից, Պայմանագրի կնքումից երկու ամիս հետո ներկայացված նախագիծն ուղղակիորեն հանգեցնում է՝ գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների

միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման, ինչն Ընկերության կողմից չի կարող ըդունվել, քանի որ թե ֆինանսական և թե տեխնիկական մասով այն իրատեսական չէ, այն պայմաններում, երբ Ընկերությունը Պայմանագրի կնքել է ոչ թե վնասների կրելու համար, այլ կոնկրետ օգուտներ ստանալու, մինչդեռ Հիմնադրամի կողմից ներկայացված նոր նախագիծն ուղղակիորեն խաթարում է Ընկերության իրավաշահերը:

Վերը նշած իրավիճակում ավելի քան պարզ է, որ Հիմնադրամի գործողություններն այն մասով, որ պայմանագրի գինն անփոփոխ է մնացել, ուղղակիորեն հակասում են ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 56 կետի 1-ին ենթակետով նախատեսված արգելքներին:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման» աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Նույն պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, և 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

Հիմնադրամի կողմից Կապալառուին չի տրամադրվել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք, իսկ նախագիծը տրամադրվել է 27.11.2017 թվականին, որպիսի հանգամանքները հանդիսանում են Պայմանագրի էական պայմանների խախտում:

Ընկերության կողմից Հիմնադրամին առաջարկվել է մինչև 20.12.2017 թվականը վերականգնել Ընկերության խախտված իրավունքներն, այն է վերացնել առկա խոչընդոտները, ինչը հնարավորություն կտա Ընկերությանը Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 սկզբնական հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվի հիման վրա իրականացնել Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը: Ստեղծված իրավիճակում Հիմնադրամի ոչ իրավաչափ գործողությունների պատճառով՝ «գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող

գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման» տեսքով կասեցվել է Պայմանագրի կատարումը, իսկ տնտեսական մասով այն դարձրել անիրատեսական և անիրագործելի: Փաստորեն ստացվում է, որ Հիմնադրամի կողմից առաջացրած արհեստական նոր պայմանները՝ Պայմանագրի կնքումից երկու ամիս անց Ընկերությանը ներկայացված նախագծի տեսքով հանգեցրել են Պայմանագրի խաթարմանը՝ կասեցմանը, իրենց բոլոր բացասական հետևանքներով, ինչի կանխատեսման դեպքում Ընկերության և Հիմնադրամի միջև կկնքվեր էականորեն տարբեր պայմաններով պայմանագիր կամ ընդհանրապես պայմանագիր չէր կնքվի:

Ավելին, Հիմնադրամի վերը նշված ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում Ընկերությունը կրել և կրում է վնասներ՝ այդ թվում իրական վնասի և բաց թողնված օգուտի տեսքով, որոնք Ընկերությունը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում՝ Պայմանագրի իրացման դեպքում, եթե վերջինիս իրավունքները չխախտվեին:

1058-րդ հոդվածի, 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

Պայմանագրի հիման վրա, Ընկերությունը համապատասխան Ելքի օրդերներով ընդանուր առմամբ Բանկին վճարել է 1.200.953 ՀՀ դրամ, որպիսի հանգամանքը գնահատվում է, որպես վնաս, այն հիմքով, որ դա Պայմանագրով նախատեսված պայմանների իրացման փաստացի ծավալն է ապահովել՝ թիվ E17-000190՝ կատարման բանկային երաշխիքի և թիվ E17-000191 կանխավճարի բանկային երաշխիքի համաձայնագրերի կնքումը, ինչի ուժով Բանկն Ընկերությանը տրամադրել է կատարման բանկային երաշխիք 25.205.261 ՀՀ դրամ գումարի չափով՝ ի ապահովումն Հիմնադրամի հետ կնքվելիք, ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3 ծածկագրով Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման պայմանագրի կատարման:

Պայմանագրի ուժով Բանկին վճարվել է 1.200.953 ՀՀ դրամ, ինչը Ընկերության համար համարվում է պատճառված վնաս:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդը անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ուսումնասիրում են պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Խորհրդի անդամները սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր են բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն»:

Ամփոփելով վերագրյալը Ընկերությունը խնդրել է Խորհրդին «Արարատշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

«Արարատշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.12.2017թ. ժամը 11:10-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ով միջնորդել է Խորհրդին կասեցնել նիստը՝ գործով առկա նյութերը ուսումնասիրելու և դիրքորոշում ներկայացնելու համար:

Խորհուրդը բավարարել է վերջինիս միջնորդությունը և հետաձգել է նիստը:

«Արարատշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.12.2017թ. ժամը 11:10-ի, 26.01.2018թ. ժամը 11:50 և 20.02.2018թ. ժամը 10:25-ի նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 13.02.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը՝

«Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ ծրագիրը հաստատվել է «Կառավարության 2017թ.օգոստոսի 03-ի թիվ 912-Ն որոշմամբ: Նշված որոշման շրջանակներում, ի թիվս այլոց, նախատեսվում էր իրականացնել նաև Ջերմուկի ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման աշխատանքները: Աշխատանքների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 2017թ. օգոստոսի 04-ից օգոստոսի 22-ը իրականացրել է պետական կարիքների համար կապալային աշխատանքների գնման մրցույթ, որի արդյունքում հաղթած մասնակից Արարատշին ՍՊԸ-ի հետ 2017թ. սեպտեմբերի 12-ին կնքվել է պետական գնման իրականացման ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3 պայմանագիրը:

Համաձայն ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3 պայմանագրի 1.3 կետի՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները պետք է սկսվեն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո: Սակայն, Արարատշին ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքները ժամականին չեն մեկնարկել, ինչի հետևանքով ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3 պայմանագիրը լուծվել է 2017թ. դեկտեմբերի 14-ին:

Ըստ ս.թ. հունվարի 26-ին Արարատշին ՍՊԸ-ի կողմից «Գնումների բողոքորկման խորհրդի նիստին ներկայացված դիրքորոշմանը, աշխատանքները չեն սկսվել, քանի որ Հիմնադրամը խախտել է իր պայմանագրային պարտավորությունները՝ կապալառուին տարածքը չտրամադրելով, ինչը՝ ըստ կապալառուի, հասնդիսանում է Պայմանագրի էական պայմանի խախտում, սակայն.

Տարածքի տրամադրման պարտականության կատարումը ենթադրում է կապալառուի համար աշխատանքները հենց այդ վայրում կատարելու հնարավորության փաստացի ապահովում: Կապալառուն միշտ հնարավորություն է ունեցել պայմանագրով սահմանված ժամկետներում առանց որևէ խոչընդոտի սկսել աշխատանքերի իրականացումը համապատասխան տարածքում:

Պայմանագրի անբաժան մաս հանդիսացող հավելվածներում հստակ նշված է այն տարածքը, որտեղ կապալառուն պետք է իրականացնի աշխատանքները: Պատվիրատուն, նրա ներկայացուցիչները կամ ցանկացած այլ անձ երբևէ չեն խոչընդոտել կապալառուի մուտքը համապատասխան տարածք: Վերջինս առանց որևէ արգելքի կարող էր

պայմանագրով նախատեսված ժամկետներում սկսել աշխատանքները: Ավելին՝ կապալառուի ներկայացուցիչը այցելել և ծանոթացել է շինվերանորոգման ենթակա տարածքին:

«Հ քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավոր է պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչև նրանից ցուցում ստանալը դադարեցնել աշխատանքը, եթե հայտնաբերվել են՝... 3) կապալառուից անկախ այլ հանգամանքներ, որոնք սպառնում են կատարվող աշխատանքի արդյունքի պիտանիությանը և ամրությանը կամ անհնար են դարձնում դրանք ժամանակին ավարտելը:»

Կապալառուն նման խոչընդոտների առկայության մասին պատվիրատուին չի հայտնել և դրանք վերացնելու պահանջ վերջինիս չի ներկայացրել: Եթե իրականում պատվիրատուն անհրաժեշտ տարածք չտրամադրեր, ապա կապալառուն պարտավոր էր վերջինիս տեղեկացնել դրա մասին և պահանջել տրամադրելու համապատասխան տարածք, ինչը փաստացի չի կատարվել:

Այսպիսով, կապալառուի այն պնդումները, որ վերջինս չի կարողացել իրականացնել իր պայմանագրային պարտավորությունները, քանի որ պատվիրատուն չի տրամադրել համապատասխան տարածք, իրականությանը չեն համապատասխանում:

Ինչ վերաբերում է աշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու նպատակով պատվիրատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով արված առաջարկությանը՝ ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3 Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Ծավալաթերթ-Նախահաշվում պայմանագրային գնի սահմաններում փոփոխություններ կատարելուն, ապա՝

«Հ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 56-րդ կետը սահմանում է՝ «Արգելվում է պայմանագրում <...> կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռքբերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝

- պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցումը կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը.

- պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների ծավալների ավելացումը, որը գերազանցում է պայմանագրի ընդհանուր գնի տասը տոկոսը. <...>»:

Նշված իրավական նորմի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ պայմանագրի գնի անփոփոխ մնալու դեպքում ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցում չի թույլատրվում, քանի որ դա կհանգեցնի գնման առարկայի միավորի ձեռքբերման գնի ավելացմանը: Նշված կարգավորման համաձայն, չի թույլատրվում պայմանագրում նմանաբնույթ փոփոխություն իրականացնել, ինչը կհանգեցնի գնման միավորի գնի ձեռքբերման արժեքի ավելացմանը (օր.՝ 100-ից կդառնա 200):

Չի թույլատրվում նաև այնպիսի փոփոխություն, երբ թեև պայմանագրի առարկայի ծավալի նվազեցմանը զուգահեռ նվազում է նաև պայմանագրի գինը, սակայն, այդ նվազեցումները միմյանց համաչափ չեն: Հիշատակված կարգավորումը ուղղված է պայմանագրով արդեն համաձայնեցված գնման միավորի ձեռքբերման գնի հետագա ավելացումը /անգամ կողմերի համաձայնությամբ/ կանխելուն՝ նպատակ ունենալով ապահովել հանրային միջոնցների առավել արդյունավետ օգտագործումը:

Սակայն, այս դեպքում գնման առարկայի միավոր հանդիսացող աշխատանքների քանակի նվազեցում կամ ավելացում տեղի չի ունեցել: Իրականում, առաջարկվող փոփոխությունը ուղղված է նախագծային-նախահաշվային փաստաթղթերի ճշտմանը, որը պատվիրատուն իրավասու էր կատարել:

Այսպես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 742-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Պատվիրատուն իրավունք ունի նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարել՝ պայմանով, որ դրանցից բխող լրացուցիչ աշխատանքներն իրենց արժեքով չգերազանցեն նախահաշվում նշված շինարարության ընդհանուր արժեքի տասը տոկոսը և չփոխեն շինարարական կապալի պայմանագրում նախատեսված աշխատանքների բնույթը:

2. Նախագծային փաստաթղթում սույն հոդվածի 1-ին կետում նշված ծավալից ավելի փոփոխությունները կատարվում են կողմերի համաձայնությամբ կազմված լրացուցիչ նախահաշվի հիման վրա»:

Այս նորմից հետևում է, որ պատվիրատուն միակողմանիորեն իավունք ունի փոփոխելու նախագծային փաստաթղթերը, եթե դրանց արդյունքում առաջացած լրացուցիչ

աշխատանքների արժեքը չի գերազանցում շինարարության ընդհանուր արժեքի 10 (տաս) տոկոսը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշման 56-րդ կետի 3-րդ ենթակետն էլ սահմանում է՝

«Արգելվում է պայմանագրում <...>՝

3) պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի 15 (տասնհինգ) տոկոսը:

Պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը»:

ՀՏՀՀ-ի կողմից արված առաջարկությունը Արարատշին ՍՊԸ-ին արվել է գործող օրենդորության դրույթներին խիստ համապատասխան, պայմանագրային գնի սահմաններում և սահմանված ընթացակարգերին համաձայն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե կապալառուն ժամանակին չի սկսում կապալի պայմանագրի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար, պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները»:

Պայմանագրի 3.1.4 կետի (ա) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը և հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ աշխատանքները պետք է սկսվեին պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո: Կատարման ժամկետը ըստ պայմանագրի՝ 2017 թ. դեկտեմբերի 15-ն է:

Հաշվի առնելով, որ 2017թ. դեկտեմբերի 14-ի դրությամբ որևէ աշխատանք սկսված չի եղել և ակնհայտ էր, որ պայմանագրով նախատեսված ժամկետում՝ մինչև դեկտեմբերի 15-ը, աշխատանքը չէր կարող ավարտվել, ինչպես նաև այն հանգամանքը, որ պատվիրատուի առաջարկությունը՝ աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով փոփոխություններ կատարելու վերաբերյալ, կապալառուի կողմից չի ընդունվել պատվիրատուն, ղեկավարվելով վերը նշված նորմերով և պայմանագրային դրույթներով, 2017 թ. դեկտեմբերի 14-ին միակողմանիորեն լուծել է պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.12.2017թ. ժամը 11:10-ի և 26.01.2018թ. ժամը 11:50-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/95 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/95 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Արարատշին» ՍՊԸ-ի միջև 12.09.2017թ. կնքվել է N ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/3 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն (տվյալ դեպքում՝ «Արարատշին» ՍՊԸ-ն) պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի քնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման աշխատանքները (այսուհետ՝

աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ աշխատանքը և վարձատրել դրա համար:

3. Պայմանագրի 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոնների, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

4. Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2017թ. դեկտեմբերի 15-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2017թ. թիվ 03/26-3/24236-17 գրությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 13.02.2018թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, «Արարատշին» ՍՊԸ-ի 26.01.2018թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Նույն օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

«Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

«Քաղաքացիական օրենսգրքի 700-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

«Քաղաքացիական օրենսգրքի 742-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«1. Պատվիրատուն իրավունք ունի նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարել՝ պայմանով, որ դրանցից բխող լրացուցիչ աշխատանքներն իրենց արժեքով չգերազանցեն նախահաշվում նշված շինարարության ընդհանուր արժեքի տասը տոկոսը և չփոխեն շինարարական կապալի պայմանագրում նախատեսված աշխատանքների բնույթը:

2. Նախագծային փաստաթղթում սույն հոդվածի 1-ին կետում նշված ծավալից ավելի փոփոխությունները կատարվում են կողմերի համաձայնությամբ կազմված լրացուցիչ նախահաշվի հիման վրա»:

3. Կապալառուն, սույն օրենսգրքի 466 հոդվածին համապատասխան, իրավունք ունի պահանջել վերանայելու նախահաշիվը, եթե իրենից անկախ պատճառներով աշխատանքի արժեքն ավելի քան տասը տոկոսով գերազանցել է նախահաշվով նախատեսվածից:

4. Կապալառուն իրավունք ունի պահանջել հատուցելու նախագծային փաստաթղթերի թերությունները պարզելու և դրանք վերանայելու հետ կապված ողջամիտ ծախսերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «Արարատշին» ՍՊԸ-ի միջև 12.09.2017թ. կնքվել է N ՋՀԲՄ-ԱՇՁԲ-2017/3 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալատուն (տվյալ դեպքում՝ «Արարատշին» ՍՊԸ-ն) պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշիվով նախատեսված «Ջերմուկ համայնքում ճախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքաձածկույթի շինվերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ աշխատանքը և վարձատրել դրա համար:

Խորհուրդն արձանագրում է, որ ՍՑ-ԱՄ-2017/95 պաշտոնական ընթացակարգով տեղի ունեցած նիստի ժամանակ «Արարատշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսելու ժամանակ Ընկերությունը հանդիպել է մի շարք խոչընդոտների, սակայն Պատվիրատուն խնդրել է Ընկերությանը հետաձգել աշխատանքների կատարումը՝ մինչ Ընկերությանը կտրամադրվի նոր լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվ: Պայմանագիրը կնքելուց հետո, Պատվիրատուի կողմից փոփոխվել է Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշիվը, և միայն երկու ամիս անց՝ 27.11.2017 թվականին, Ընկերությանն է ներկայացվել լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվ, որը չի

համապատասխանել Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով նախատեսված ծավալաթերթ-նախահաշվին և ներկայացվել է 71% աշխատանքների ծավալների փոփոխություններով:

Խորհուրդն արձանագրում է, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմանդրամի ծրագրերի իրականացման բաժնի վարիչը 14.09.2017թ. գրությամբ դիմել է Ջերմուկ համայնքի ղեկավարին և հայտնել է, որ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակներում նախատեսվում է Ջերմուկ քաղաքի Ձախափնյա թաղամասի թվով 20 բնակելի շենքերի տանիքների փոխարինում: Վերականգնման ենթակա տանիքների փաստացի վիճակի և Ձեր պատվերով «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից մշակված տանիքների փոխարինման նախագծի ու նախահաշվի ուսումնասիրման արդյունքում ի հայտ են եկել մի շարք հարցեր, որոնք անհապաղ լուծման կարիք ունեն:

Մասնավորապես՝ նախագծում չեն նշված փոխարինման ենթակա փայտանյութի (ծպեղնավուտքեր, որմնափայտ, կավարամած, թեքաններ և այլն) հատվածքները, չի նախատեսված օդափոխության հորանների վերականգնումը և տանիք դուրս բերումը, տանիքի քիվամասերում չի նախատեսված հարթ թիթեղով արցունքաթափերի իրականացումը համապատասխան տախտակամածով և այլն:

Ամփոփելով վերոշարադրվածը, խնդրել է հնարավորինս սեղմ ժամկետներում հանձնարարել նախագծային կազմակերպությանը համապատասխան ճշտումներ և լրացումներ կատարել նախագծում և նախահաշվում և ներկայացնել ՀՏՀ գրասենյակ, քանի որ առանց նշված հարցերի վերջանական լուծման հնարավոր չէ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Պատվիրատուն 24.11.2017թ. թիվ 24/11 գրությամբ Ընկերությանն է ներկայացրել «Ջերմուկ համայնքում ձախափնյա թաղամասի բնակելի շենքերի տանիքածածկույթի շինվերանորոգման» ծրագրի շրջանակներում իրականացվելիք աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակված տարբերակը և հանձնարարել է Ընկերությանը մեկնարկել «Հայաստանի տարածքային զարգացման հիմանդրամի» և «Արարատշին» ՍՊԸ-ի միջև 12.09.2017թ. կնքված պետական գնման «ՋՀԲՆ-ԱՇՁԲ-2017/3» պայմանագրով նախատեսված աշխատանքները՝ ըստ ներկայացված փաստաթղթերի:

Ընկերության կողմից վերոհիշյալ գրությունը ստացվել է 27.11.2017թ-ին:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից 27.11.2017թ-ին Ընկերությանը տրամադրված լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվը Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 հավելվածի հետ համեմատած ներկայացվել է 71% փոփոխություններով, իսկ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրերի իրականացման բաժնի վարիչի 14.09.2017թ.-ի գրությունը ուղղված Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ Պայմանագրի կնքումից երկու օր անց, ինքնին փաստում է, որ Պայմանագրով նախատեսված ծավալաթերթ-նախահաշիվը ունեցել է մի շարք խնդիրներ և վիճահարույց հարցեր, առանց որոնց լուծման հնարավոր չէր լինի մեկնարկել աշխատանքների կատարումը:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրի N 1 հավելվածով՝ ծավալաթերթ-նախահաշիվով և Պատվիրատուի կողմից 27.11.2017թ-ին ներկայացված լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվով նախատեսված աշխատանքների ընդհանուր գինը կազմել է 391 963 620 ՀՀ դրամ, այսինքն Պայմանագրային ընդհանուր գնի փոփոխություն տեղի չի ունեցել:

Միաժամանակ Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N 1 հավելվածի՝ ծավալաթերթ-նախահաշիվի համաձայն՝ թվով 20 բնակելի շենքերի համար տանիքածածկույթի պատրաստում 0,5 մմ հաստությամբ գունավոր մետաղակղմինդրով /Կասկադ/ աշխատանքի կատարման ծավալը սահմանվել է 18253մ², իսկ միավորի արժեքը նախատեսվել է 6,15 հազ. դրամ, որի ընդհանուր գինը կազմել է 112 255 950 ՀՀ դրամ, մինչդեռ 27.11.2017թ-ին Ընկերությանը տրամադրված լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվի համաձայն՝ վերը նշված աշխատանքի ծավալը սահմանվել է 5346 մ², միավորի արժեքը՝ 6,15 հազ. դրամ, որի ընդհանուր գինը կազմել է 32 877900 ՀՀ դրամ ինչպես նաև առանձին տողով նախատեսվել է նույնարվանդակ աշխատանքի կատարում, որի ծավալը սահմանվել է՝ 13387 մ², իսկ միավորի արժեքը՝ 7,89 հազ. դրամ, որի ընդհանուր գինը կազմել է 105 623 430 ՀՀ դրամ:

Այսպիսով, տեղի է ունեցել աշխատանքների քանակի նվազեցում և ավելացում, որը հանգեցրել է գնման առարկայի միավորի ձեռքբերման գնի ավելացմանը:

Մինչդեռ Կարգի 56-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ **արգելվում է պայմանագրում**, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում **կադարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման**: Արհեստական են համարվում հետևյալ փոփոխությունները՝

1. **պայմանագրի գնի անփոփոխ մնալու պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների նվազեցումը** կամ պայմանագրի գնի նվազեցման պայմանով՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալների ոչ համամասնորեն նվազեցումը, **որի արդյունքում ավելանում է գնման առարկայի միավորի ձեռքբերման գինը**:

2. պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների ծավալների ավելացումը, որը գերազանցում է պայմանագրի ընդհանուր գնի տասը տոկոսը, բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ցանկում ներառված գնումների: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների ծավալները կարող են ավելանալ միայն պայմանագրով աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման համար սահմանված ժամկետում:

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից կատարված վերը նշված փոփոխությունները տեղի են ունեցել Կարգի 56-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի խախտմամբ:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից լրամշակված ծավալաթերթ-նախահաշվով կատարված մյուս փոփոխություններին, ապա Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով տեղի են ունեցել Կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջների պահպանմամբ, այսինքն կատարված փոփոխությունները գումարային արտահայտությամբ կատարվել են պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի թույլատրելի շրջանակներում:

Կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների փոխարինումն այլ բնութագրեր ունեցող ապրանքներով, աշխատանքներով կամ ծառայություններով, որոնք միասին գումարային արտահայտությամբ գերազանցում են պայմանագրի գնի տասնհինգ տոկոսը: Պայմանագրի գնի տասնհինգ տոկոսի շրջանակում փոխարինումը կարող է կատարվել, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման մասնագիտական եզրակացությունն այն մասին, որ փոխարինումը հանգեցնում է պայմանագրի արդյունավետ իրականացմանը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ՍՑ-ԱՄ-2017/95 պաշտոնական ընթացակարգով ներկայացված այն դիտարկմանը, որ Պայմանագրի 3.2.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն պարտավոր էր Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք, ինչը չի կատարվել, որպիսի հանգամանքը հանդիսանում է Պայմանագրի էական պայմանի խախտում, ապա սույն մասով Խորհուրդն արձանագրում է, որ ինչպես Պայմանագրի N 1 հավելվածով, այնպես էլ Պատվիրատուի կողմից 27.11.2017թ. Ընկերությանը ներկայացված լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվով հստակ նշված է այն տարածքը, որտեղ կապալառուն պետք է իրականացներ աշխատանքները, ուստի Խորհուրդը գտնում է, որ սույն մասով Պատվիրատուի կողմից Պայմանագրի 3.2.3 ենթակետով նախատեսված խախտում թույլ չի տրվել:

Մինչդեռ, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն լրամշակված ծավալաթերթ-նախահաշիվը կազմելով Կարգի 56-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի խախտմամբ, փաստացի զրկել է «Արարատշին» ՍՊԸ-ին Պայմանագրով նախատեսված պարտականությունների հետագա կատարման հնարավորությունից, ուստի նման փաստական հանգամանքներում Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 25.12.2017թ. թիվ 03/26-3/24236-17 գրությամբ «Արարատշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04000271) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ